ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 247-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

Որոշում եմ.

1.2022 թվականի սեպտեմբերի 02-ին ժամը 11-00-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի մշակույթի պալատում գումարել Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստ,հետևյալ օրակարգով.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2022թ. սեպտեմբերի 02-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2)Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին
3) Թումանյան համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին
4) Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի << Թումանյան համայնքի 2022 թվականի բնուջեն հաստատելու մասին>> թիվ 10-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի06-035-0106-0010 ծածկագրի 1.140524 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի06-035-0106-0008 ծածկագրի 0,2 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի06-089-0124-0003 ծածկագրի 0.72394 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքն աճուրդային կարգով օտարելու մասին
8) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
9) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
10) Հողամասը Թումանան համայնքի սեփականություն ճանաչելու մասին
11) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Ահնիձոր և Չկալով բնակավայրերի բուժկետերի տարածքները անհատույց տրամադրելու մասին
12) ՀՀ Լոռու մարզի Թումանան համայնքի ավագանու նստաշրջանի օրը որոշելու մասին :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 22 թ. օգոստոսի 30
ք.Թումանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 248-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ,ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ,ՊԱՐԻՍՊԻ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ բնակելի տունը,դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22 ապրիլի 1991թ.N 6 արձանագրության քաղվածքը, <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ -ն կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, հիմք ընդունելով 23.11.2021թ. ըստ ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գործ N 149/21 և Դսեղ գյուղի բնակիչ Գագիկ Հովակիմյանի /մուտք՝ 16.06.2022թ. թիվ 404 /դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Գագիկ Սերյոժայի Հովակիմյանի /ծնված 21.01.1962թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 58 փողոց, թիվ 1/1 հասցեում գտնվող 06-035-0074-0018 ծածկագրի 0,24023 հա հողամասի և հողամասում 1998 թվականին կառուցված 52.1քմ մակերեսով բնակելի տան, 1970թ. կառուցված ՝ 33.80 քմ մակերեսով անասնաշենքի, 11.80 քմ մակերեսով անասնաշենքի բաց պատշգամբի և 24 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ՝ որպես օրինական գույք:
2. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
3. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:
4. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. օգոստոսի 31
ք.Թումանյան